ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունիսի 26-ից 29-ը Դա Նանգ (Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն)՝Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   ԷրիկԳրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

ՀՀ բնապահպանության նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

Դա Նանգ (Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն)

2018թ. հունիսի 26-ից 29-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամ

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն՝ Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) Ասամբլեայի 6-րդ նախարարական նստաշրջաններին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Դա Նանգ քաղաքում տեղի ունեցած Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) Ասամբլեայի 6-րդ նախարարական հանդիպմանը մասնակցում էին Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի անդամ 183 երկրների ներկայացուցիչներ, նախարարներ, որոնք հանդես եկան իրենց ելույթներով: Հանդիպման ժամանակ ես ևս հանդես եմ եկել ելույթով (ելույթը կցվում է):

Քննարկումների ընթացքում կարևորվեց շրջակա միջավայրի մարտահրավերներին դիմակայելու «տրանսֆորմացիոն փոփոխության»

անհրաժեշտությունը և հրատապությունը՝ մասնավորապես կարևորելով ԳԷՀ-ի դերը այդ ուղղությամբ՝ նկատի առնելով, որ վերջինս հանդիսանում է համաշխարհային մակարդակով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված առանցքային ֆինանսական գործիք: Ընդունելով կլիմայի փոփոխության, անտառահատումների, հողերի դեգրադացիայի, ջրային ռեսուրսների և պլաստիկի աղտոտվածության համընդգրկուն խնդրի հրատապությունը՝ ընդգծվեց միջազգային համագործակցության խորացման անհրաժեշտությունը՝ համապարփակ և փոխկապակցված լուծումներ գտնելու նպատակով: Կողմերին սերտորեն համագործակցելու կոչ եղավ, որպեսզի նման հանդիպումների ընթացքում ձեռք բերված համաձայնությունները կյանքի կոչվեն՝ ներկա և ապագա սերունդների համար առավել դիմակայուն և կենսունակ մոլորակ ունենալու նպատակով:
Նստաշրջանի ընթացքում ֆինանսական միջոցների տեղաբշխման արդյունքում Հայաստանին հատկացվել է 7.450.000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ ԳԷՀ-7 իրականացման ժամանակահատվածի համար: Այն ուղղվելու է կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության պահպանման և հողերի դեգրադացիայի դեմ պայքարի ծրագրեր իրականացնելու նպատակով:

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Հանդիպման ընթացքում, ի թիվս օրակարգով նախատեսված քննարկումների, տեղի են ունեցել նաև մի շարք առանձին երկկողմ հանդիպումներ, որոնցից առավել ուշագրավ է՝

- Համաշխարհային բանկի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գլոբալ պրակտիկայի գլխավոր տնօրեն տիկին Կարին Կեմպերի հետ հանդիպումը, որի ընթացքում մեր կողմից վերահաստատվեց պատրաստակամությունը համագործակցելու «Բնություն պարտքի դիմաց» գործընթացի շրջանակներում: Ներկայումս բանակցություններ են ընթանում գործընթացի և համագործակցության ձևաչափի հստակեցման ուղղությամբ:
- Կլիմայի կանաչ հիմադրամի(ԿԿՀ) քարտուղար Հավարդ Բամսեի հետ, որի ընթացքում քննարկվեցին ԿԿՀ կողմից հատկացվող դրամաշնորհներից Հայաստանի՝ առավելագույնս օգտվելու հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև Հայաստանում ստեղծելու ԿԿՀ տարածաշրջանային գրասենյակ:

- ՄԱԶԾ Գլոբալ բնապահպանական ֆինանսավորման գործադիր համակարգող Ադրիանա Դինույի հետ
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի նախագահ Սիր Սոոմա Չակրաբարտիի և այլ հեղինակավոր միջազգային բնապահպանական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Բոլոր առանձնազրույցներում իմ կողմից վերահաստատվել է երկրի դիրքորոշումը՝ բնապահպանական հիմնախնդիրները ճանաչելու որպես հրատապ օրակարգային հարց:

ՀՀ բնապահպանության նախարար՝

Է.Գրիգորյան